ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Հ. Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Արդի դարաշրջանի հիմնական գծերից է նախորդ բոլոր ժամանակների համեմատ գիտության արագ զարգացումը, որն իր հերթին նպաստում է ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների արագ զարգացմանը։ Մեծ է գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա. փոխելով արտադրությունը և տեխնիկան, այն դրանով իսկ նպաստում է մարդու վերափոխմանը։

Վերջին տասնամյակում գիտահետազոտական լայն ուսումնասիրությունների առարկա են դարձել գիտատեխնիկական հեղափոխության, տեխնիկական առաջընթացի և դրանց հետ սերտորեն կապված աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման պրոբլեմները։ Նման հետաքրքրությունը բխում է կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում տեղի ունեցող խոր վերափոխությունները վերլուծելու և մեկնաբանելու անհրաժեշտությունից։

Ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությունը, որն ունի սոցիալական և բնագիտական խոր արմատներ, իրագործվում է հիմնականում հետևյալ ուղղություններով. էներգիայի նոր աղբյուրների, շուրջերկրյա տիեզերական տարածության յուրացում, նոր, առավել շահավետ տեխնոլոգիայի մեխանիկական մշակում։

Ավտոմատացումը գիտատեխնիկական հեղափոխության առանցքն է։ Նրա շնորհիվ հնարավոր է դառնում էներգիայի նոր աղբյուրների և տիեզերքի յուրացումը, անցումը նոր տեխնոլոգիային, որը, որպես կանոն, բացառում է մարդու անմիջական մասնակցությունը։ Իր հերթին դա տեղի է ունենում գիտության նորագույն նվաճումների և դրանց իրագործման հիման վրա։

Ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությանը և տեխնիկական առաջընթացին հատուկ է գիտական հայտնագործությունների պրակտիկ օգտագործման արագությունը։ Այսպես. էլեկտրական հոսանքի հայտնագործումից մինչև առաջին էլեկտրակայանի ստեղծումը տևեց մոտ մեկ դար, իսկ ուրանի միջուկի ճեղքումից մինչև առաջին ատոմային ռեակտորի ստեղծումը՝ երեք տարի։ Դա հետևանք է մեր ժամանակի գիտության նվաճումների արտակարգ արագ օգտագործման, լավ կազմակերպման և արտադրությունում դրանց արդյունքների կիրառման[1]*։*

Կուսակցության XXIV համագումարը սովետական գիտության գլխավոր խնդիրներից մեկը համարեց գիտատեխնիկական առաջադիմության վճռական արագացումը, նշելով որ «այն դարաշրջանում, երբ ավելի ու ավելի մեծ չափով է դրսևորվում գիտության, որպես անմիջական արտադրողական ուժի, դե-

[1] *Տե՛ս* «Коммунист», 1966, № 17.

ը, գլխավոր են դառնում արդեն ոչ թե նրա առանձին նվաճումները, որքան էլ փայլուն լինեն դրանք, այլ ամբողջ արտադրության գիտատեխնիկական բարձր մակարդակը»[2]։

Իրոք, մեծ է գիտատեխնիկական հեղափոխության դերը, քանի որ միայն դրանով է հնարավոր դառնում ստեղծել կոմունիզմի նյութատեխնիկական բազա։ Ահա թե ինչու ՍՄԿԿ XXIV համագումարը գիտության ու տեխնիկայի առաջադիմությունը համարելով կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գլխավոր լծակ, նշեց, որ «մեր առջև...։ ծառացած է պատմական կարևորություն ունեցող խնդիր՝ գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները օրգանապես միացնել տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունների հետ, ավելի լայնորեն զարգացնել արտադրության հետ գիտության միացման սեփական, սոցիալիզմին հատուկ ձևերը»[3]։

Գիտության զարգացումը նպաստում է արտադրության զարգացմանն ու կատարելագործմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, արտադրության ներքին հնարավորությունների հայտնաբերմանը և շահութաբեր օգտագործմանը, որոնք իրենց հերթին նորանոր խնդիրներ ու պահանջներ են դնում գիտության առջև։

Վ. Ի. Լենինը սովետական իշխանության առաջին իսկ շրջանում մեծ տեղ տալով գիտության և արտադրության սերտ կապին, նկատել է. «Մենք գիտենք, որ կոմունիստական հասարակություն չի կարելի կառուցել, եթե չվերածնենք արդյունաբերությունն ու հողագործությունը. ընդ որում դրանք պետք է վերածնենք ոչ թե հին ձևով։ Դրանք պետք է վերածնել ժամանակակից գիտության վերջին խոսքի համաձայն կառուցված հիմքի վրա»[4]։ Գիտության և արտադրության զարգացումը և համագործակցումը նպաստում են միմյանց փոխհարստացմանը, որը «դառնում է բնության վրա մարդու ազդեցության միասնական կոմպլեքսի անբաժանելի օղակը, արդի գիտատեխնիկական հեղափոխության բնորոշ հատկանիշներից մեկը»[5]։

Գիտատեխնիկական հեղափոխությունը ստեղծում է արտադրության մեթոդներն արմատապես վերափոխելու համար մինչ այդ չտեսնված հնարավորություններ, բարձր արտադրողական գործիքներ, արտադրության նոր ճյուղեր և այլն։

Վ. Ի. Լենինը ժամանակին սովորեցնում էր, որ «...հաղթում է նա, ով ունի մեծագույն տեխնիկա, կազմակերպվածություն, կարգապահություն և լավագույն մեքենաներ։ Պետք է սովորել, որ առանց մեքենայի, առանց կարգապահության, ժամանակակից հասարակության մեջ ապրել չի կարելի...»[6]։

Տեխնիկական առաջընթացը հնարավորություն է տալիս ոչ միայն ավելացնելու հասարակության նյութական հարստությունները, այլ նաև հսկայական չափով ազդում է մեր կյանքի բոլոր կողմերի վրա՝ վերափոխելով այն։

---

2 Լ. Ի. Բ ր ե ժ ն և, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 86։

3 Նույն տեղում, էջ 89։

4 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 31, էջ 351։

5 Ս. Պ. Տ ր ա պ ե զ ն ի կ ո վ, Լենինիզմը և արդի գիտատեխնիկական հեղափոխությունը («Լենինյան ուղիով», 1970, № 6)։

6 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 27, էջ 226։

Գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում, չափազանց կարևոր նշանակություն ունի մարդու կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը, քանի որ մարդը տվյալ պարագայում հանդես է գալիս որպես գիտատեխնիկական հեղափոխության օբյեկտ և սուբյեկտ։ Նշանակում է, որ մարդը ոչ միայն կրում է գիտատեխնիկական հեղափոխության սոցիալական հետևանքների համակողմանի ազդեցությունը, այլև նպաստում է գիտության և տեխնիկայի զարգացմանը։ Վ. Ի. Լենինը մարդուն համարելով արտադրողական ուժերի գլխավոր տարր, գրում է. «Ամբողջ մարդկության առաջին արտադրողական ուժը բանվորը, աշխատավորն է»[7]։

ՍՄԿԿ-ն և սովետական կառավարությունը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում, նրա նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում մեծ տեղ տալով մարդու կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացմանը, անում են ամեն ինչ, պատրաստելու բարձր կուլտուր-տեխնիկական մակարդակ ունեցող բանվորական, ինժեներա-տեխնիկական և այլ կադրեր։

Սոցիալիստական հասարակարգում աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակ ասելով առաջին հերթին պետք է նկատի ունենալ կրթական մակարդակը, որակավորումը, փորձը, հմտությունը, աշխատանքային ունակությունը, արտադրական գործունեության ամբողջությունը, գիտության, գրականության, արվեստի հետ կապված լինելու աստիճանը և դեպի աշխատանքն ունեցած վերաբերմունքը։

Աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի կարևոր գործոններից մեկը կրթական մակարդակն է, որովհետև առանց դրան անհնար է գիտատեխնիկական հեղափոխության և տեխնիկական առաջընթացի իրացումը, գիտության, տեխնիկայի, արտադրության նվաճումների կիրառումը կյանքում։

ՍՄԿԿ XXIV համագումարում ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը նշեց. «Կոմունիզմի կառուցումը անկարելի է առաջ շարժել առանց իրեն՝ մարդու բազմակողմանի զարգացման։ Առանց մարդկանց կուլտուրայի, կրթության, հասարակական գիտակցության, ներքին հասունության բարձր մակարդակի կոմունիզմը անհնարին է, ինչպես որ այն անհնարին է առանց նյութատեխնիկական համապատասխան բազայի»[8]։

Բավական է ասել, որ 1920—1940 թթ. ՍՍՀՄ-ում 50 միլիոն մարդ դարձավ գրագետ, իսկ 1951—1955 թթ. ավելի քան 38 միլիոն բանվորներ և ծառայողներ ձեռնարկություններին կից կուրսերում և խմբակներում բարձրացրին իրենց որակավորումը և ստացան նոր մասնագիտություն[9]։ «1959 թվականին մեր երկրում յուրաքանչյուր հազար բանվորից բարձրագույն և միջնակարգ կրթություն ուներ 386-ը, իսկ հիմա՝ ավելի քան 550-ը»[10]։

Մեր հանրապետությունում ևս այդ բնագավառում առաջընթացը վիթխարի է։ Եթե մինչև առաջին համաշխարհային պատերազմը այժմյան Հայաստա-

---

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 443։

8 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, էջ 129—130։

9 Տե՛ս «Подъем культурно-технического уровня советского рабочего класса». М. 1961, стр. 33, 68

10 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, էջ 113։

նի տերիտորիայում հաշվվում էր 459 դպրոց՝ 35 հազար սովորողներով, որոնք կազմում էին դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի 7—8%-ը, ապա 1970—1971 ուսումնական տարում գործող 1338 հանրակրթական միջնակարգ, ութամյա և տարրական դպրոցներում սովորողների թիվը հասնում էր ավելի քան 627 հազարի։ Միայն 1966—1970 թթ. հանրապետությունում կառուցվել է 285 դպրոցական շենք՝ 194 հազար աշակերտական տեղով[11]։

Կուսակցության XXIV համագումարը համապատասխան կազմակերպությունների առջև խնդիր դրեց առաջիկա հնգամյակում ավարտել անցումը ընդհանուր միջնակարգ կրթության, քանի որ «Ընդհանուր միջնակարգ կրթության իրագործումը յուրաքանչյուրին լայն հնարավորություններ կընձեռնի մասնագիտություն ընտրելու ըստ իր հակումների, իր ընդունակությունները լավագույնս գործադրելու ի բարօրություն ամբողջ հասարակության»[12]։

Այժմ քան երբեք, անհրաժեշտ է, որ արտադրության մեջ աշխատող յուրաքանչյուր ոք, գրագետ լինելու հետ միասին, տեղյակ լինի գիտության և տեխնիկայի վերջին նվաճումներին, որպեսզի կարողանա այդ նվաճումներն օգտագործել արտադրության մեջ, գործի դնի այսօրվա բարդ սարքավորումները, իսկ հարկ եղած դեպքում դրանք վերանորոգի և այլն։ Պատահական չէ, որ Միության հատկապես Մոսկվայի, Լենինգրադի, Ուրալի մի շարք առաջավոր ձեռնարկություններում, որպես կանոն, աշխատանքի կարող են ընդունվել միայն մինիմում միջնակարգ կրթություն ունեցողները։ «Ժամանակակից արտադրությունը արագ աճող պահանջներ է ներկայացնում ոչ միայն մեքենաներին, տեխնիկային, այլև նախ և առաջ բուն աշխատողներին, նրանց, ովքեր ստեղծում են այդ մեքենաները և կառավարում այդ տեխնիկան։ Մարդու մասնագիտական գիտելիքները, պրոֆեսիոնալ բարձր պատրաստությունը, ընդհանուր կուլտուրան դառնում են ավելի ու ավելի լայն խավերի հաջող աշխատանքի պարտադիր պայմանը»[13]։

Բանվոր դասակարգի, աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը մեծ չափով նպաստում է բարձրացնելու նաև աշխատանքի արտադրողականությունը, որը «...վերջին հաշվով, ամենակարևորը, ամենագլխավորն է նոր հասարակարգի հաղթանակի համար»[14]։

Ակադեմիկոս Ս. Գ. Ստրումիլինի հաշվումներով, յոթերորդ դասարանի կրթություն ունեցող բանվորների աշխատանքի արտադրողականությունը (այլ հավասար պայմաններում), միջին հաշվով 67 %-ով գերազանցում է այն բանվորների աշխատանքի արտադրողականությանը, որոնք ունեն նույն տարիքը և աշխատանքային ստաժը, բայց չունեն կրթություն[15]։ Նույն հեղինակի հաշվումներով, միայն 1960 թ. մեր երկրի ազգային եկամտի 23 %-ը, որը

---

11 Տե՛ս Ա. Ե. Քոչինյան, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXV համագումարին, Երևան, 1971, էջ 56, 57 և Народное образование в СССР, М., 1967, стр. 508.

12 Ա. Ն. Կոսիգին, ՍՍՀՄ Ժողովրդական տնտեսության զարգացման 1971—1975 թվականների հնգամյա պլանի՝ ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվները, Երևան, էջ 68։

13 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, էջ 64։

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 522։

15 Տե՛ս «Вопросы философии», 1954, № 3.

դրամական արտահայտությամբ կազմում էր 33,7 միլիարդ ռուբլի, ստացվել է աշխատավորների որակավորման բարձրացման հաշվին[16]։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման չափազանց կարևոր նշանակության մասին է խոսում նաև հետևյալը. «Եթե աշխատանքի արտադրողականությունը երկրում մնար 1928 թ. մակարդակին, ապա արդյունաբերական-արտադրական անձնակազմն այժմ պետք է լիներ 400 միլիոն մարդ, մինչդեռ 1968 թ. արդյունաբերության ոլորտում աշխատողների թիվը 30 միլիոն էր»[17]։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1971—1975 թթ. հնգամյա պլանով նախատեսվում է 9-րդ հնգամյակում ազգային եկամտի աճի 80—85%-ը ստանալ աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին։

Մեր հանրապետությունում ևս աշխատանքի արտադրողականությունն աճել է մեծ տեմպերով։ Բավական է ասել, որ 1970 թ. արդյունաբերության բնագավառում այն 1965 թ. համեմատությամբ աճել է 31%-ով, նախորդ հինգ տարիների 15,5 %-ի դիմաց[18]։

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը մեծ չափով կախված է նաև այն բանից, թե ժողովրդական տնտեսությունը որքանով է ապահովված համապատասխան գիտահետազոտական բազայով և կադրերով, քանի որ գիտահետազոտական ինստիտուտները, կոնստրուկտորական բյուրոները, լաբորատորիաները, համապատասխան ուսումնա-գիտական հաստատություններն ու կազմակերպություններն իրենց հերթին նպաստում են արդյունաբերության, գյուղատնտեսության, ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում տեխնիկական առաջընթացի արմատավորմանը։ Անցած հնգամյակում գիտական աշխատողների ընդհանուր թիվը մեր երկրում ավելացել է 1,4 անգամ և այժմ կազմում է մոտավորապես 930 հազար մարդ[19]։ Ուշագրավ է, որ մեր մոլորակի յուրաքանչյուր չորրորդ գիտնականը՝ սովետական է, իսկ մտավոր աշխատանքով զբաղվողների թիվը մեր երկրում այժմ անցնում է 30 միլիոնից[20]։

Ներկայումս Հայաստանում գործում են ավելի քան 100 գիտահետազոտական հիմնարկություններ ու լաբորատորիաներ, որտեղ ընդգրկված են 12 հազարից ավելի գիտաշխատողներ[21]։ Նրանք ստեղծագործական մեծ աշխատանք են կատարում արտադրական տեխնիկան ու տեխնոլոգիան կատարելագործելու, արդյունաբերական արտադրանքի նոր տեսակներ յուրացնելու և տեխնիկական առաջընթացն էլ ավելի արագացնելու ուղղությամբ։

Գիտատեխնիկական հեղափոխությունը, տեխնիկական առաջընթացը և աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը գտնվում են միասնության մեջ, պայմանավորված են մեկը մյուսով։

---

16 Տե՛ս «Экономическая газета», 2. IV. 1962.

17 «Լենինյան ուղիով», 1970, № 1։

18 Տե՛ս Ա. Ե. Քոչինյան, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXV համագումարին, էջ 16։

19 Տե՛ս Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, էջ 134—135։

20 Տե՛ս «Правда», 6. VIII. 1971; 10. VIII. 1971.

21 Տե՛ս Ա. Ե. Քոչինյան, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXV համագումարին, էջ 61։

Գիտության, ժողովրդական տնտեսության զարգացումը մեր երկրում էլ ավելի մեծ թափ ստացավ հատկապես վերջին երկու տասնամյակում։ Դա բնորոշ է նաև մեր հանրապետության համար, որի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, ալյումինի, Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանները, Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի, Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական, արհեստական մետաքսաթելի, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատները, տեխնիկական առաջընթացի, բարձրորակ կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքում հասել են անվիճելի հաջողություններ։ Բավական է ասել, որ դեռ 1962 թ. Հայէլեկտրամեքենաշինական գործարանը թողարկում էր ավելի քան 70 տեսակի արտադրանք, որի մի զգալի մասն արտահանվում է աշխարհի մոտ 40 երկրներ[22]։ Բանվոր-ծառայողների կրթական մակարդակի բարձրացմանը և մասնագիտական գիտելիքների ձեռք բերմանը մեծ չափով նպաստում է 1960 թ. գործարանին առընթեր կազմակերպված Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղը, որը կադրեր է պատրաստում՝ էլեկտրական մեքենաների և ապարատների, մեքենաների և մեքենաշինության տեխնոլոգիայի, ձուլման արտադրության տեխնոլոգիայի մասնագիտությունների գծով։ 1962/1963 ուսումնական տարում գործարանի 983 աշխատողներ սովորում էին այդ մասնաճյուղում, երկրի տարբեր բուհերում, տեխնիկումներում, բաներիտ դպրոցներում։ 1964/1965 ուստարում գործարանի աշխատակից սովորողների թիվը անցնում էր 1460-ից[23]։ Կադրերի պատրաստման և նրանց կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարվել հատկապես գործարանի № 31 արտադրամասում, որտեղ գործում էր տեխնիկական առաջընթացի համալսարան։

Արտադրական պրոցեսների մեքենայացման և ավտոմատացման բնագավառում կոլեկտիվի հետևողական աշխատանքի շնորհիվ 1970 թ. վերջերին գործարանում մեքենայացման աշխատանքում ընդգրկված էին հիմնական բանվորների 68,9%-ը, իսկ օժանդակ արտադրության մեջ՝ 61,8%-ը։ Գործարանի բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների բարձր կուլտուր-տեխնիկական մակարդակի, սոցիալիստական մրցության լայն թափի և ստեղծագործական ունակությունների վառ դրսևորման մասին է խոսում այն փաստը, որ գործարանի գրեթե բոլոր աշխատողները ընդգրկված են անհատական ու բրիգադային մրցության մեջ[24]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի օրինակը վառ ապացույցն է այն բանի, թե ինչ հաջողությունների կարելի է հասնել գիտատեխնիկական հեղափոխության, տեխնիկական առաջընթացի արմատավորման, բանվորների, ողջ աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման շնորհիվ։

Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները պատմության ընթացքի վրա թողնում են աճող ազդեցություն։ Այն դառ-

22 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 87, գ. 259, թ. 112։
23 Նույն տեղում, ֆ. 3649, ց. 1, գ. 389, թ. 30։
24 Տե՛ս «Սովետական Հայաստան», 28. X. 1971։

նում է պայքարի հիմնական հանգուցակետ երկու սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի միջև[25]։ Հետևաբար պետք է ամեն ինչ անել գիտատեխնիկական հեղափոխության և տեխնիկական առաջընթացի նվաճումները կյանքում իրագործելու ու արմատավորելու համար։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևն ասաց. «Հայաստանի գիտնականների, ինժեներների ու բանվորների ստեղծած շատ արտադրանքներ լավ հռչակ են ձեռք բերել ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում։ Պարզ է, որ արդպիսի բարձրորակ արտադրանք կարելի է թողարկել սոսկ այնպիսի ձեռնարկություններում, որոնք տեխնիկական զինման բարձր մակարդակ ունեն։ Պարզ է, որ այդպիսի մեքենաներ, ապարատներ և սարքեր կարող է ստեղծել միայն բարձր որակավորում ունեցող բանվոր դասակարգը, որը լայն գիտելիքներ և լայն մտահորիզոն ունի։ Հայաստանի բանվոր դասակարգի՝ մեր երկրի բանվոր դասակարգի պանծալի ջոկատի ձևավորումը սոցիալիզմի կարևորագույն նվաճումն է»[26]։

НАУЧНО-ТЕХНИЧЕСКАЯ РЕВОЛЮЦИЯ И ПОВЫШЕНИЕ КУЛЬТУРНО-ТЕХНИЧЕСКОГО УРОВНЯ ТРУДЯЩИХСЯ

Г. М. АБРАМЯН

Резюме

Человечество в данное время по экономическому развитию находится на этапе научно-технической революции.

Наука становится непосредственно производительной силой. Темпы развития научно-технической революции особенно ощутимы в нашей стране, ибо она, создавая материально-техническую базу коммунизма, давно уже перешла к развернутому строительству коммунистического общества.

Научно-техническая революция оказывает в свою очередь революционизирующее воздействие на все отрасли общественной жизни и, в частности, способствует формированию нового человека.

Научно-техническая революция и технический прогресс могут дать эффективные результаты только в том случае, когда производство, народное хозяйство пополняются соответвующими квалифицированными кадрами, имеющими высокий культурно-технический уровень.

В Армении в последнее десятилетие в этом направлении проделаны определенные работы: производство пополнено квалифицированными рабочими и инженерно-техническими кадрами, которые своим творческим трудом призваны ускорить темпы технического прогресса.

---

25 *Տե՛ս* Ю. С. Мелещенко, С. В. Шухардин, Ленин и научно-технический прогресс, Л., 1969, стр. 275.

26 *Լ. Ի. Բրեժնև, Սովետական Հայաստանի 50 տարին («Սովետական Հայաստան», 30.XI. 1970)։*